Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

2017 նոյեմբեր

WomenNet.am

«Ես սաղ տեսա,
տեսա՝ պապաս մամային
դանակով խփեց սպանեց,
հա խփում էր մամային,
հա խփում էր...»

էջ 4

Թվերն են խոսում

Երեք կանանցից առնվազն մեկը...

ՄԱԿ-ի տվյալներով՝ աշխարհում երեք կանանցից առնվազն մեկն իր կյանքի ընթացքում ենթարկվում է բռնության, 750 մլն կին ամուսնանում է մինչև 18 տարեկան դառնալը, 250 մլն-ը ենթարկվում են սեռական օրգանների խեղման: Մեկ տարում բռնության հետևանքով զոհված կանանց 50%-ը սպանվել է կողակցի կամ էլ ընտանիքի անդամի կողմից:

Հայաստանում ամեն օր ընտանեկան բռնության 2 դեպք է գրանցվում

ՀՀ ոստիկանության տվյալներով՝ 2012-2016 թթ. ընթացքում գրանցվել է ընտանեկան բռնության 3571 դեպք, այսինքն՝ իրավապահ մարմիններն ամեն օր առնվազն 2 դեպքի վերաբերյալ հաղորդում են ստացել: 2017-ի ինը ամիսներին 602 դեպք է գրանցվել, այսինքն՝ օրինաչափությունը ոչ միայն պահպանվել է, այլև աճի միտում ունի: Սրանք պաշտոնական թվերն են, սակայն ընտանեկան բռնությանը հատուկ է լատենտայնության բարձր մակարդակը: Ընտանեկան բռնության ենթարկվածներից շատերը, առաջնորդվելով բազմաթիվ պատճառներով, իսկ առաջին հերթին՝ կարծրատիպերով, իրավապահ մարմիններ չեն դիմում: 2016-ին ՀԿ-ների թեժ գծերին ստացվող ընտանեկան բռնության վերաբերյալ հեռախոսազանգերի թիվը հասել է 5000-ի...

Սպանությունների 17%-ը ընտանեկան բռնության համատեքստում է

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ 2015-ին ընտանեկան բռնության հետևանքով սպանությունները կազմում են գրանցված սպանությունների 17%-ը: ՀԿ-ների տվյալներով՝ 2010-2017 թթ. ընթացքում ընտանեկան բռնության հետևանքով սպանվել է 50 կին...

Առնվազն 140 երկիր ունի ընտանեկան բռնության մասին օրենսդրություն

ՄԱԿ-Կանայք գործակալության տվյալներով՝ 2017 թ. օգոստոսին աշխարհում առնվազն 140 երկիր ուներ հատուկ օրենքներ՝ ուղղված բռնության կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին: Ընտանեկան բռնությունն օրենսդրորեն չի կարգավորվում հիմնականում աֆրիկյան որոշ պետություններում և Միջին Արևելքի երկրներում:

Լուսանկարը՝ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ակցիայից

«Ճիշտ, ամուր ընտանիքի հիմքը բռնությունը չէ»

«Ես չեմ կարող համաձայնել, որ կնոջը, երեխային ծեծելը մեր ազգային ավանդույթն է, դա շեղում է մեր ազգային ավանդույթներից, քանի որ ճիշտ, ամուր, հայկական ընտանիքի հիմքը բռնությունը չէ»,- ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի արձագանքն է ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի՝ իբր ավանդույթներին հակասելու մտահոգությանը...

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի նախագիծն այժմ գտնվում է Ազգային ժողովում: Կառավարության առաջարկով այս օրենսդրական նախաձեռնությունն անհետաձգելի է համարվել և ներառվելու է Ազգային ժողովի դեկտեմբերի 12-ին գումարվելիք արտահերթ նստաշրջանի օրակարգում:

Օրինագիծը, որն առաջին անգամ ներկայացվել էր հանրությանը դեռ այս տարվա սեպտեմբերին, փոփոխության էր ենթարկվել հանրային քննարկումների ընթացքում հնչեցված որոշ մտահոգությունները փարատելու նպատակով: Դիտարկվել են նաև խնդրով զբաղվող կանանց կազմակերպությունների առաջարկները, որոնց մի մասն է միայն հաշվի առնվել:

Առաջին հերթին փոփոխված է օրինագծի անվանումը, նախկինում այն կոչվում էր «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի նախագիծ: «Ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» դրական երանգավորմամբ մեսիջի ավելացումը ակնհայտորեն ուղղված է չեզոքացնելու ընդդիմախոսների կողմից մինչ այդ հնչեցվող «ընտանիքը քանդելու» մեղադրանքները...

ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի ներկայացմամբ՝ օրինագծի անվանման փոփոխությունը սերտորեն կապված է նրա նպատակների հետ: «Մինչ այդ օրենքի ընդունման նպատակները երկուսն էին՝ մեկը կանխարգելել, երկրորդը՝ պաշտպանել: Հիմա քննարկումների փուլում արդեն երրորդ նպատակը ավելացավ՝ համերաշխության վերականգնման նպատակը»,- ասաց նա:

Տարընթերցումները բացառելու նպատակով նախագծում հստակեցվել են վիճահարույց համարվող ֆիզիկական, տնտեսական, հոգեբանական բռնության եզրույթները: Ընտանեկան բռնության տեսակների մեջ ավելացել է անտեսումը, այն է. «ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցության համար անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը տիրապետում է պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների և եթե համապատասխան ծառայությունները նրա համար հասանելի են»:

Փաթեթով նախատեսում են բռնությունից տուժած անձանց պաշտպանության երեք հիմնական միջոց՝ նախազգուշացում, անհետաձգելի միջամտություն և պաշտպանական որոշում: Դրանց նպատակն է ընտանեկան բռնության ենթարկված անձին բռնարարից պաշտպանելն ու հետագա բռնությունները կանխելը: Ինչպես ասաց Դավիթ Հարությունյանը, նախատեսվում են բռնություն գործած անձի նկատմամբ մի շարք սահմանափակումներ, օրինակ՝ պաշտպանել որոշակի հեռավորություն տուժողից, չմտնել կոնտակտի մեջ, չկրել, չպահել զենք, անցնել բուժման կուրս՝ օրինակ ալկոհոլամոլությունից և այլն: Պաշտպանական մեխանիզմները, ըստ նրա, ևս սահմանափակումներ են ենթադրում, և խախտումների համար նախատեսված է քրեական և վարչական պատասխանատվություն: «Անհետաձգելի միջամտության պարագայում տուժողի կամքը պարտադիր չէ, քանի որ շատ հաճախ տուժողները, որոնք ենթարկվում են բռնության, նրանք բողոքելու դեպքում կրկնակի ենթարկվում են բռնության»,- ասաց նախարարը: Դավիթ Հարությունյանի խոսքով՝ օրինագծով նախատեսվում է երկու ինստիտուտի ստեղծում՝ աջակցության կենտրոններ ու ապաստարաններ: Կազմավորվելու է նաև Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ, որում կընդգրկվեն գործադիր իշխանության և իրավապահ մարմինների, ՀԿ-ների ներկայացուցիչներ, աջակցության կենտրոնների և ապաստարանների, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներ: Դավիթ Հարությունյանը նշեց նաև, որ իրազեկության բարձրացման անհրաժեշտություն ևս կա, պետք է նաև կրթեն ոստիկանության աշխատակիցներին. «Այսինքն՝ լուրջ աշխատանք է մեզ սպասում, բայց կարևորը օրենքն է: Նպատակը, որը դրել ենք, համարում ենք հույժ կարևոր»:

Նախարարի դիտարկմամբ՝ օրինագծին հակընդդեմ շարժում կա, որի միջոցով փորձում են օրինագծում գոյություն չունեցող կարգավորումները ներկայացնել որպես օրենքի թերություն: «Պետք է մեկ անգամ ևս հայտարարեմ, որ փաթեթը չի նախատեսում ծնողական իրավունքներից զրկման կամ սահմանափակման որևէ նոր նորմ և նոր հիմք»,- ասաց նա, հավելելով, որ օրինագծում մի շարք լուրջ, կարևոր փոփոխություններ են կատարվել՝ մտահոգիչ հարցերը հանելու համար: «Օրինակ՝ առանց ծնողի չեն կարող երեխային վերցնել ընտանիքից և տեղափոխել ապաստարան: Դա կոշտ ամրագրել ենք, որ դադարեցնենք այն անհիմն քննադատությունը, որը հաճախ հնչում է այս օրինագծի հասցեին»,- ընդգծեց Դավիթ Հարությունյանը:

Մեկնարկեց ակտիվության 16-օրյակը

Աշխարհը կրկին ներկվեց նարնջագույնով

Նոյեմբերի 25-ից՝ Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվանից, մեկնարկեց Գենդերային բռնության դեմ պայքարի ակտիվության 16-օրյակը, որը կտևի մինչև դեկտեմբերի10-ը՝ Մարդու իրավունքների միջազգային օրը: Այս տարի 16-օրյակն անցնում է «Չանտեսելով ոչ ոքի՝ վե՛րջ տանք կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը» կարգախոսի ներքո: Ինչպես նախորդ տարիներին, նարնջագույնը կլինի բոլոր գործողությունները միավորող առանցքային գույնը՝ հանրային ուշադրությունը սևեռելով կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հիմնախնդրի վրա: Այս տարվա 16-օրյակի բոլոր միջոցառումները նպատակ ունեն լուսաբանելու 2030 թ. օրակարգի հիմնական տեսլականներից մեկը, այն է՝ «արդար, հավասար, հանդուրժողական, բաց և ներառական աշխարհ ունենալը, որում բավարարված են առավել խոցելիների կարիքները»:

Orange the World

LEAVE NO ONE BEHIND: END VIOLENCE AGAINST WOMEN AND GIRLS

Զայն բազմաց

Յուրաքանչյուր չորրորդը համաձայն է, որ «Կինը ծեծի է արժանի որոշ դեպքերում»

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2016 թ. անցկացված «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության տվյալներով՝ հայ հասարակությունը հակված է արդարացնելու կանանց նկատմամբ բռնությունը.

- «Կինը ծեծի է արժանի որոշ դեպքերում» պնդմանը համաձայնել է հարցվածների 27,7%-ը, այսինքն՝ հարցվածներից յուրաքանչյուր չորրորդն արդարացնում է բռնությունը:
- «Կինը պետք է հանդուրժի բռնությունը հանուն ընտանիքի պահպանման» պնդմանը հարցվածների 35,7%-ը դրական է պատասխանել:
- «Եթե կինը տղամարդուն դավաճանում է, ապա վերջինս կարող է կնոջը խփել» պնդմանը համաձայն է հարցվածների 55,4%-ը:
- «Եթե կինը բռնաբարվում է, ուրեմն նա է ինչ-որ բան արել՝ ինքն իրեն դնելով այդ իրադրության մեջ» պնդմանը համաձայն է հարցվածների 32,2%-ը:

Հետազոտության տվյալներով՝ կանանց 45,9%-ը խոստովանել է, որ ենթարկվում է հոգեբանական բռնության իրենց զուգընկերոջ կողմից, 21,3%-ը պատասխանել է, որ ենթարկվում է տնտեսական բռնության, իսկ 12,5%-ը՝ ֆիզիկական բռնության: Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա նրանց ավելի մեծ տոկոսն է խոստովանել, որ կանանց տարբեր տեսակի բռնության է ենթարկում:

Հարցին, թե արդյոք ձեր զուգընկերոջ նկատմամբ կիրառո՞ւմ եք վերահսկողական վարք, տղամարդկանց 95,5%-ը պատասխանել է՝ այո:

Մանկության տարիներին բռնության ենթարկվե՞լ եք



Հարցված տղամարդկանց 27,2%-ը պատասխանել է, որ մինչև 18 տարեկանը ենթարկվել է ֆիզիկական բռնության իրենց ընտանիքում, 10,9%-ը՝ հոգեբանական բռնության, 3,5%-ը՝ սեռական բռնության, 1%-ն ասել է, որ իրենց արհամարհված ու լքված են զգացել: Փորձագետների դիտարկմամբ՝ այն տղամարդիկ, որոնք մինչև 18 տարեկանը ենթարկվել են բռնության, ավելի շատ են հակված բռնություն կիրառելու կանանց նկատմամբ:

Բռնության ենթարկված տասը կանանցից չորսը երբեք չեն դիմել օգնության

Վերջերս հրապարակված «Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն 2015-16» զեկույցի համաձայն՝ երբևէ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց 29%-ը բռնությունը դադարեցնելու նպատակով դիմել է օգնության, մինչդեռ նույնքան մասնաբաժինը երբեք չի դիմել, սակայն որևէ մեկին պատմել է բռնության մասին: Ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված տասը կանանցից չորսը երբեք չեն դիմել օգնության և ոչ մեկին չեն պատմել բռնության մասին:

Հանրային լսումներ

«Եթե մենք այն հասարակությունն ենք, որտեղ չկա բռնություն, այդ ո՞վ պիտի խլի մեր երեխային»

«Եթե մենք այն հասարակությունն ենք, որտեղ չկա բռնություն, այդ ո՞վ պիտի խլի մեր երեխային: Այն ընտանիքում, որտեղ կան սեր և համերաշխություն, ոստիկանը պիտի գա այդ ընտանիքից երեխային տանի՞: Եթե մենք ստեղծենք բարոյական հասարակություն, որտեղ չի լինի բռնություն, այս օրենքը կմնա մեռած տառ: Եթե ես նորմալ ընտանիք ունեմ, սիրող հայր եմ, սիրող ամուսին եմ, սիրող զավակ եմ, և սիրում եմ, սիրված եմ, էդ ընտանեկան բռնության կանխարգելման կամ չգիտեմ որ օրենքի ո՞ր հոդվածը ինձ պիտի վնասի... էնպես որ, երևակայական հրեշներ մի՛ ստեղծեք, երևակայական հրեշների դեմ մի՛ պայքարեք, միմյանց նկատմամբ հանդուրժո՛ղ եղեք, միմյանց մեջ թշնամի մի՛ տեսեք և դավադրություն էլ առավել ևս մի՛ տեսեք»:

Միքայել եպիսկոպոս Աջապահյան, Շիրակի թեմի առաջնորդ

«Դավադրություններ մի՛ փնտրեք այս օրինագծում»...

«Ինչ-որ դավադրություններ են փնտրում այս օրենքում, բայց դավադրություններ լինում են մութ անկյուններում, ոչ թե հանրային քննարկումների շրջանակում ու հատկապես այն դեպքում, երբ օրենքը տևական ժամանակ է՝ հրապարակված է, հազարավոր մարդիկ դրան ծանոթացել են ու հանդես եկել 100-ից ավելի հարցադրումներ-առաջարկներով, ինչը նաև խոսում է այս օրենքի հանրային պահանջի մասին: Մինչդեռ մեղադրանք է հնչեցվում, որ օրինագծի հանրային պահանջը ձևավորվել է արտաքին ուժերի ազդեցության ներքո: Այս առիթով կարող եմ ասել, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի իրավունքների պաշտպանության մի շարք միջազգային պայմանագրերի, և այդ պայմանագրերով մենք ստանձնել ենք մի շարք պարտավորություններ: Այդ պայմանագրերից է նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, որն ունի Կոմիտե, որի կազմում են տարբեր պետությունների ներկայացուցիչներ, ի դեպ, մեծ մասը ոչ արևմտյան երկրներից: Կոմիտեն պետությունների համար հանձնարարականներ է տալիս, և այդպիսի հանձնարարական կա նաև այս օրենքի հետ կապված: Այնպես որ, այստեղ որևէ նորություն կամ սենսացիոն բան չկա»:

Վիգեն Քոչարյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

«Քննիչն ասաց՝ հել գնա, ամուսինդ է, ծեծում է, պետք է ենթարկվես»

«Ամենամեծ խնդիրը նրանում է, որ բռնության ենթարկված կանայք չգիտեն, թե վախի կամ նվաստացման մթնոլորտից դուրս պրծնելուց հետո ի՞նչ պետք է անեն: Նրանց համար գերխնդիր է զգալ իրենց ու իրենց երեխաների պաշտպանվածությունը օրենքով: Ինձ համար ամենադժվարը նա էր, երբ քննիչը եկավ ու ասաց՝ ի՞նչ պիտի անես, հել գնա հետը ապրի, ոչինչ, ամուսինդ է, բոլոր ընտանիքներում էլ կանայք համակերպվում են, երբ ամուսինները ծեծում են: Ես տանից փախել եմ գիշերով, կյանքս փրկելու համար ու առանց երեխաներիս, դրանից հետո ամիսներ շարունակ ես չէի կարողանում նրանց տեսնել, շփվել նրանց հետ: Հայրն ասում էր՝ երբ կգնաս ու քրեական գործը հետ կվերցնես ու կասես, որ ես քեզ չեմ ծեծել, այդ ժամանակ էլ կտեսնես երեխաներիդ: Ու չկար որևէ կառույց, որ կարողանայի իրենց դուռը թակել ու ասել, որ մորը զրկում են իր երեխաներից: Ես տեղ չունեի մնալու, մնացել եմ Կանանց աջակցման կենտրոնի ապաստարանում, որտեղ գտնվել եմ ապահով վայրում: Տարիներ շարունակ սպասել եմ, թե ե՛րբ դատարանը կորոշի, թե երեխաները որտեղ պետք է ապրեն: Դատարանի որոշումից հետո էլ երեք տարի շարունակ ԴԱՀԿ աշխատակիցները գնում էին ու որդուս հարցում էին՝ Համլե՛տ, ուզո՞ւմ ես գնաս մամայի մոտ, նա ասում էր՝ չեմ ուզում: ԴԱՀԿ-ը ձեռքները լվացել էր, ես էլ հենց այս վախից, որ երեխաներիս չեմ տեսնի, ինը տարի դիմացել եմ...»

Հասմիկ Խաչատրյան

«Ընտանեկան բռնությունը ամենավտանգավոր հանցանքներից է»

«Ընտանեկան բռնությունը նվազում է այն հասարակություններում, որտեղ կան գենդերային հավասարություն, ընտանեկան բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու մեխանիզմներ ու օրենքներ, որոնք աջակցում են զոհին ու պատժում բռնարարին: Հետևապես, օրենքը պետք է ներառի պատժող, պաշտպանող ու կանխարգելող միջոցառումներ, նաև օրենքի կիրարկման մոնիթորինգ: Օրենքի մեծագույն թերություններից է այն, որ բռնությունը չի քրեականացվում. քանի որ ընտանեկան բռնությունը ունի մի շարք առանձնահատկություններ, պատիժը չի կարող Քրեական օրենսգրքով սահմանափակվել: Ընտանեկան բռնությունը ամենավտանգավոր հանցանքներից է, որովհետև զոհը ապրում է իր բռնարարի հետ»:

Մարո Մաթոսյան, «Կանանց աջակցման կենտրոնի» հիմնադիր տնօրեն

Բողոքի ակցիա

«Ավանդույթը օրենքի կարգավորման հիմք չէ»

Օրերս «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան «Ավանդույթը օրենքի կարգավորման հիմք չէ» խորագրով բողոքի ակցիա անցկացրեց ՀՀ կառավարության շենքի առջև՝ իր անհամաձայնությունը հայտնելով ընտանեկան բռնության մասին օրինագծում արված կոնցեպտուալ փոփոխությունների առնչությամբ: Ակցիայի մասնակիցները իրենց նկատառումների իրավական վերլուծության փաթեթ հանձնեցին վարչապետ Կարեն Կարապետյանին:

Կանանց նկատմամբ բռնության խնդրով զբաղվող կազմակերպություններն արդեն մի քանի տարի է՝ ինչ պայքարում են ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու համար, հետևապես ՀՀ Կառավարության կողմից ներկայացված նախագծի շուրջ էլ մեկ անգամ չէ, որ առաջարկություններ են ներկայացրել: Կանանց աջակցման կենտրոնի փաստաբան Նոնա Գալստյանի դիտարկմամբ՝ կոալիցիայի կողմից արված առաջարկներն ավելի շատ չեն ընդունվել, քան ընդունվել են: Օրինակ՝ բռնության բոլոր տեսակի դրսևորումները քրեականացնելու և որպես հետևանք քրեական պատասխանատվություն նախատեսելու վերաբերյալ առաջարկը չի ընդունվել: Իսկ ընդունվել են, օրինակ՝ անտեսումը կամ հղիության արհեստական ընդհատման հարկադրելը որպես բռնության դրսևորում սահմանելը, նաև մասնավոր մեղադրանքի գործերը ex officio կարգով (ի պաշտոնե) շարունակելու ընթացակարգը:

«Մեզ համար հիմնական անընդունելի դրույթն այն է, որ ինչպես վերնագրում, այնպես էլ նպատակների ցանկում ավելացվել է «ընտանիքում համերաշխության վերականգնումը», միջազգային պրակտիկայում ոլորտը կարգավորող օրենքներում և իրավական փաստաթղթերում նման նպատակ չկա»,- ասում է փաստաբանը, նկատելով, որ դրանով իսկ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի իրավունքները ստորադասվում են հասարակության այլ անդամների կողմից սուբյեկտիվ կերպով գնահատվող «ընտանիքի համերաշխությանը»:

Իրավապաշտպան Զառա Հովհաննիսյանի խոսքով՝ օրինագծում ուժեղացվել է հաշտարարի ինստիտուտը: «Շեշտը դրվում է անձանց միջև հաշտության եզր գտնելու վրա, նաև տեղ է գտել «ավանդական արժեք» եզրույթը, որը ևս իրավական ձևակերպում չի ստացել: Ըստ այդմ՝ շատ դժվար կլինի սահմանել՝ ընտանեկան բռնությունը կիրառվում է ավանդական արժեքի ոգուն համահո՞ւնչ, թե՞ իսկապես բռնություն է»,- նկատում է Հովհաննիսյանը:

Նոնա Գալստյանի կարծիքով՝ «ավանդական արժեք» եզրույթը ոչ միայն իրավական կատեգորիա չի հանդիսանում, այլև իրավակիրառ գործունեության մեջ առհասարակ անհնարին կլինի մասնավորեցնել այս եզրույթի բովանդակության շրջանակը, քանի որ այն ուղղակիորեն կապված է անձի սուբյեկտիվ ընկալման հետ: Սա գործնականում ոչ միայն կհանգեցնի իրավական որոշակիության սկզբունքի խախտման, այլև մարդու մի շարք հիմնարար իրավունքների ոտնահարման»,- կարծում է Նոնա Գալստյանը:

Կանանց ռեսուրսային կենտրոնի ներկայացուցիչ Նվարդ Փիլիպոսյանի խոսքով՝ հաշտարարության ինստիտուտի ներառումն օրինագծում վտանգներ է պարունակում բռնության ենթարկված կանանց համար: «Առհասարակ, ես շատ դրական եմ վերաբերվում հաշտարարության ինստիտուտին, բայց այն կիրառելի է այն դեպքում, երբ կողմերը հավասար դիրքերում են գտնվում, կարող են նստել սեղանի շուրջ և երրորդ անաչառ անձի օգնությամբ գտնել իրենց համար լավագույն լուծումը: Սակայն այս նախագծով առաջարկվում է հաշտարարության ինստիտուտը կիրառել պաշտպանական որոշման կամ անհետաձգելի միջամտության մասին որոշման փուլում, երբ արդեն իսկ բռնության ենթարկված անձի կյանքին կամ առողջությանը ռեալ վտանգ է սպառնացել: Իսկ հաշտարարությունը ենթադրում է կողմերի միջև հանդիպում: Սա հնարավորություն է տալիս բռնարարին ոչ միայն տեղում ճնշում գործադրել զոհի հանդեպ, այլև, օրինակ՝ տվյալ տարածքից դուրս գալուց հետո հետևել նրան»:

Նվարդ Փիլիպոսյանը հիշեցնում է, որ պաշտպանական որոշման ժամկետը սպառելուց հետո ոչ ոք չի կարող խանգարել, որ ամուսինները կամ զույգերը հաշտվեն: «Սակայն պետք չէ նման ռիսկի գնալ և նման ինստիտուտ ներդնել պաշտպանական որոշման ընթացքում, մանավանդ որ ընդամենը երկու տարի է, ինչ հաշտարարության ինստիտուտն ընդունվել է օրենքով, այն շատ քիչ է կիրառվել, և մենք քիչ ունենք լիցենզավորված հաշտարարներ: Որքանո՞վ նրանք կկարողանան հաշվի առնել ընտանեկան բռնության բոլոր նրբությունները և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ճնշող չեն լինի կնոջ համար: Հաշվի առնելով ազգային մենթալիտետը, երբ կնոջն ասեն, որ կա նման հնարավորություն, նա ինչ-որ առումով իրեն պարտավորված կզգա փորձելու այդ տարբերակը»:

Նախագծում առկա վերոնշյալ և մի շարք այլ դրույթներ մտահոգում են «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիային, որը խնդրահարույց է համարում այսպիսի բովանդակությամբ օրենքի ընդունումը:

Բլից-հարցում խորհրդարանում

«Ավանդականը՝ սիրո, վստահության և հարգանքի վրա հիմնված ընտանիքն է, որտեղ այս օրենքը երբևէ չի կիրառվի»

«Իմ պատկերացմամբ, ավանդական ընտանիքը՝ սիրո, վստահության և փոխադարձ հարգանքի վրա հիմնված ընտանիքն է, որտեղ այս օրենքը երբևէ չի կիրառվի: Ինչ վերաբերում է օրինագծի վերտառության մեջ «ընտանիքում համերաշխության վերականգնման» ձևակերպմանը, ապա այն որևէ ձևով չի նսեմացնում բռնության դեմ պայքարի հանձնառությունը: Կարծում եմ, այս պահի դրությամբ, նախագիծը համապատասխանում է միջազգային չափորոշիչներին և այն մտահոգությունները, որոնք առկա էին հանրության շրջանում, հիմնականում փարատվել են: Երեխաներին ընտանիքից հեռացնելու վտանգի մասին ասեմ, որ այս օրինագիծը նման կարգավորում չի պարունակում: Հակառակը՝ այն, որպես սկզբունք, նախատեսում է երեխայի շահերի առաջնահերթությունը, իսկ ծնողական իրավունքներից զրկելու կամ դրանք սահմանափակելու վերաբերյալ հարցը կարգավորվել է 13 տարի առաջ ընդունված Ընտանեկան օրենքով»:

Արփինե Հովհաննիսյան, ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խմբակցություն

«Օրենքի նախագծի այս տարբերակն ավելի ընդունելի է, քան նախկինը»...

«Ես նախկինում բազմիցս հայտարարել եմ, որ օրենքի նախագծում մտահոգիչ կետեր կային, և թե՛ ես, թե՛ իմ գործընկերները մի շարք առաջարկություններով էինք հանդես եկել: Կարող եմ ասել, որ մեր կողմից հնչեցված հիմնական առաջարկություններն ընդունվել են, մի քանիսն էլ Ազգային ժողովի նիստում կքննարկենք: Սակայն արդեն այսօր, ծանոթանալով փոփոխված տարբերակին, կարող եմ ասել, որ օրենքի նախագծի այս տարբերակն ավելի ընդունելի է, քան նախկինը»...

Էդուարդ Շարմազանով, ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ խմբակցություն

«Անթույլատրելի է ընտանեկան բռնությունը ներկայացնել որպես հայկական ընտանիքի մոդել»

«Ինչպես հայտնի է, ԱԺ եվրաինտեգրման հանձնաժողովը հրավիրեց խորհրդարանական լսումներ, առաջիկայում հանձնաժողովը նաև աշխատանքային քննարկումներ է կազմակերպելու՝ ամփոփելու այն առաջարկները, որ կներկայացվեն մեր հանձնաժողովի անդամների և այլ պատգամավորների կողմից: Ինձ համար հասկանալի չէ այն աղմուկը, որ փորձ է արվում ընտանեկան բռնությունը ներկայացնել՝ որպես հայկական ընտանիքի մոդել. սա բացարձակ անթույլատրելի է: Ես ցավում եմ, որ քննարկումները բացարձակապես այս հունով են գնացել և այսօր էլ գնում են: Ինձ համար հայ ընտանիքը այն ընտանիքը չէ, որտեղ կան բռնություն ու նվաստացում կնոջ ու երեխայի հանդեպ: Ինձ համար հայ ընտանիքը այն ընտանիքն է, որտեղ կան փոխվստահություն և փոխհարգանք: Այն, որ բռնարարը, անկախ նրանից, թե դա ով է, պիտի պատժվի, միանշանակ է, բայց ինչ կերպ կամ օրենքը ինչ լրամշակումներ է պահանջում՝ սա արդեն քննարկման առարկա է»:

Նաիրա Զոհրաբյան, «Ծառուկյան» խմբակցություն

«Ընտանեկան բռնությունը տղամարդկանց արժանապատվության հարցն է նաև»

«Կա երկու պատճառ ընտանեկան բռնության. առաջինն անհատական մակարդակում քարանձավային մտածողությունն է, որ՝ իմ կինն է, ինչ կուզեմ կանեմ, և երկրորդ՝ հանրային մակարդակում նույն կարգի մտածողությունն է, որ ընտանեկան բռնությունը մասնավոր գործ է: Այդպես չէ: Ոչ մեկ իրավունք չունի վնասել կնոջը, երեխաներին, տղամարդուն, և ընտանեկան բռնությունը մասնավոր հարց չէ հենց միայն այն պատճառով, որ բռնության ենթարկված երեխաները գնում են դպրոց, ծառայում են բանակում, ամուսնանում են, ու այդ բռնարար վարքը տարածվում է նաև հանրային կյանքում: Ահա թե ինչու այս հարցը պետք է վերաբերի բոլորին, քննարկվի, անընդունելի ու ամոթալի համարվի հանրության կողմից: Օրենքին զուգահեռ պետք է լինեն հանրային պարսավանք ու անհանդուրժողականություն ընտանեկան բռնության հանդեպ: Եվ հանրային կարծիքի ձևավորման գործում շատ մեծ նշանակություն ունի նաև տղամարդկանց դերը: Ընտանեկան բռնության հարցը արժանապատվություն, կամք ու պատասխանատվություն ունեցող տղամարդկանց հարցն է նաև: Եվ հատկապես այն տղամարդկանց, ովքեր առաջնորդներ են կյանքի տարբեր ոլորտներում և կարող են ազդել պատանիների աշխարհայացքի ձևավորման գործում»:

Լենա Նազարյան, «Ելք» խմբակցություն

«Ակնհայտ է, որ օրինագծի նկատմամբ կա թյուրըմբռնում»

«Ցանկացած բռնությանը ես դեմ եմ, և կապ չունի՝ այդ բռնությունը ընտանիքո՞ւմ է, թե՞ դրանից դուրս: Ակնհայտ է նաև, որ օրենքի նախագծի նկատմամբ կա թյուրըմբռնում, մարդիկ սխալ կամ ոչ լիարժեք են ընկալում դրա բովանդակությունը: Բայց Դաշնակցությունը ընդհանուր առմամբ օրենքին կողմ է՝ որոշակի փոփոխություններով, որոնց մասով պատրաստվում ենք առաջարկություններով հանդես գալ: Թե որո՞նք են մեր կարծիքով փոփոխության ենթակա դրույթները, կբացահայտենք քննարկումների ժամանակ. այս պահին ես պատրաստ չեմ դրանք նշել, քանի որ խմբակցությունում դեռ չենք քննարկել»:

Սուրեն Մանուկյան, ՀՅԴ խմբակցություն

«Սա այն դեպքը չէ, երբ բռնության դեպքերի շատ կամ քիչ լինելով պետք է առաջնորդվել»

«Ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրինագծի քննարկումներն իսկապես վերջին շրջանում դարձան մեր քաղաքական օրակարգի թոփ թեմաներից մեկը: Իհարկե, շատ եղան նաև ծայրահեղական գնահատականներ, հարցը «լինել-չլինելու» հարթություն տեղափոխելու փորձեր, սակայն առողջ բանականությունը և մտահոգիչ վիճակագրությունը խոսում են այն մասին, որ խնդիրն իրականում առկա է, և սա այն դեպքը չէ, երբ բռնության դեպքերի քանակի շատ կամ քիչ լինելով պետք է առաջնորդվել: Բռնության յուրաքանչյուր դեպքի հետևում մարդկային մեկ կամ մի քանի ճակատագրեր են, որոնց նկատմամբ մենք պարզապես բարոյական իրավունք չունենք անտարբեր գտնվելու: Օրենքի հետ կապված հասարակության տարբեր շրջանակներում կա նաև տեղեկատվական որոշակի վակուում, որի պատճառով այս կամ այն դրույթը մեկնաբանվում է սխալ կերպով և բացասական ենթատեքստեր է պարունակում: Իրականում այս օրենքով բռնության թեկուզ մեկ դեպքի կանխարգելումն արդեն իսկ ձեռքբերում պետք է դիտարկել: Իսկ վիճահարույց կետերը պետք է մասնագետների և քաղաքական ուժերի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում վերանայեն և վերացվեն»:

Իվետա Տոնոյան, «Ծառուկյան» խմբակցություն

«Հայաստանը վաղուց ունի նման օրենքի կարիք»

Հայաստանը, կարծում եմ, ունի նման օրենքի կարիք և վաղուց ունի, որովհետև մենք ունենք դեպքեր, երբ կանայք և երեխաները ենթարկվում են ընտանիքում ճնշումների և բռնության, և իրականում մեր օրենսդրությունը պատրաստ չէ այդ իրավիճակին: Երբ ընդդիմախոսները հայտարարում են, որ օրենքի կարիք չկա, և գործառույթները կարելի է Քրեական օրենսգրքով իրականացնել, ապա հարկ է նշել, որ ՔՕ-ով այդ ամենին ավելի խիստ պատիժ է ենթադրվում, ինչի արդյունքում ընտանիքը հազիվ թե պահպանվի: Մինչդեռ ընդունվող օրենքի տրամաբանությունն ու իմաստը նրանում է, որ կանխարգելվի բռնությունը և ամեն ինչ արվի ընտանիքը պահպանելու համար: Թեպետ ընդդիմախոսների մեծ մասը օրենքի նախագիծը նույնիսկ չէր էլ կարդացել, և այս թեմայով հրավիրված խորհրդարանական լսումները դրա վառ ապացույցն էին»:

Գևորգ Գորգիսյան, «Ելք» խմբակցություն

«Ճիշտ չեմ համարում, երբ ընկնում են ծայրահեղությունների մեջ»

«Իհարկե, Հայաստանը, բարեբախտաբար, չի դասվում այն պետությունների շարքը, որտեղ ընտանեկան բռնությունն ահռելի մասշտաբների է հասնում, բայց առկա վիճակագրությունը վկայում է, որ խնդիրը կա և այն հարկավոր է լուծել: «Ծառուկյան» խմբակցությունը դեռ վերջնական որոշում չունի այս օրենքի նախագծի վերաբերյալ, բայց ես համաձայն եմ իմ որոշ գործընկերների հետ, որ նախագիծը պարունակում է վիճահարույց դրույթներ, թեև ճիշտ չեմ համարում, երբ քննարկումների ժամանակ ընկնում են ծայրահեղությունների մեջ՝ փորձելով երեխային պաղպաղակ չտալը որակել որպես ընտանեկան բռնություն կամ անընդհատ շահարկելով, թե մի՛ մտեք հայ ավանդական ընտանիք: Ի վերջո, ավանդական հայ ընտանիք ձևակերպում չունենք, բայց ակնհայտ է, որ ավանդական հայ ընտանիքը ծեծը, բռնությունը չէ և, առավել ևս, խեղաթյուրված հոգեբանությամբ երեխաները չեն»:

Լուիզա Սարգսյան, «Ծառուկյան» խմբակցություն

«Փաստ է, որ խնդիր կա, որի առաջ մենք աչքերը փակել այլևս չենք կարող»

«Ես առհասարակ դեմ եմ ցանկացած բռնության, և քանի որ մեր երկրում էլ, համաձայն վիճակագրության, բռնության դեպքերը գնալով ավելանում են ու հատկապես ընտանիքներում, ապա պետությունը պետք է ավելի ամրապնդի ու մեծացնի պրոֆիլակտիկ միջոցները: Եվ այս օրենքը կարող է որոշակիորեն դրական դերակատարություն ունենալ: Իսկ եթե կան որոշակի խնդիրներ, օրենքի նախագիծը քննարկելու ժամանակ դրանք կարելի է շտկել: Բայց այն, որ խնդիրը նաև մեր ընտանիքներում է, որ խնդիր կա, որի առաջ մենք աչքերը փակել այլևս չենք կարող՝ փաստ է. Հայաստանում, հայկական ընտանիքներում և երեխաների հանդեպ բռնությունը պետք է բացառվի»:

Կարինե Ամեմյան, ՀՀԿ խմբակցություն

Թոփ տասնյակ

Ընտանեկան բռնության մասին օրինագծի հետ կապված զավեշտները

Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումները առանձնացան նրանով, որ ընդդիմախոսներն իրենց փաստարկներով հաճախ ծայրահեղության սահմանն էին հատում: Բարձրաձայնվող «մտահոգությունների» առաջին տեղում էր այն, որ իբր «այս օրենքը կխարխլի ավանդական ընտանիքի հիմքերն ու արժեքները»... Դրան հաջորդում էին մեկնաբանություններ, որ «երեխաներին ընտանիքներից հեռացնելու են, հատուկ ապաստարաններ են տանելու, որ հացաբուլկեղենից երեխային զրկելը բռնություն է դիտարկվելու, կամ «հայրական ապտակի» ինստիտուտն են քանդելու»... Առանձին տողով շեշտվում էր սատանայի դեմ պայքարի անհրաժեշտությունը...

Փաստաբան Գևորգ Գյոզալյանն էլ նախագծի ընդդիմախոսների կողմից ներկայացվող նման տեսակետների վերաբերյալ ասել է. «Եթե առաջնորդվենք խելագարության կանխավարկածով, ցանկացած օրենք եթե բերեն, ես այնպիսի աբսուրդային բաներ կասեմ, որ բոլոր օրենքները կարելի է ուժը կորցրած ճանաչել»:

«Թույլ չենք տա էս օրենքը անցնի, պայքարելու ենք սատանայի դեմ»

...«Այդտեղ գրված է «ընտանեկան բռնություն»: Այսինքն՝ բռնությունը տեղայնացված է, կարող են ասել՝ փողոցային բռնություն, դահլիճային բռնություն: Նման օրենքներ գոյություն չունեն: Ես ասում եմ՝ կարող եք էդ օրենքի անունը դնել ընտանիքում տեղի ունեցող բռնություն, բայց իրենք բերել ընտանիքը ասոցացնում են բռնության հետ... Ընդեղ հոդվածներից մեկում գրված է՝ բարոյական բռնություն, հոգեբանական բռնություն: Օրինակ՝ եթե ես իմ երեխային ասեմ՝ հաց կեր, նոր գնա դպրոց, ինքն ասում է՝ չէ՛, ես չեմ ուտում, նշանակում է, որ ես իրեն բարոյական բռնության ենթարկեցի: Կամ երբ ասեմ՝ ինտերնետով մի՛ խաղա, դասերդ պարապի, ինձ կմեղադրեն հոգեբանական բռնություն գործադրելու մեջ: Ո՞նց են որոշելու, ո՞նց են ձևակերպելու՝ հոգեբանական բռնությունն ինչ է: Այսինքն՝ արված է այնպես, որ երբ ուզենան քո ու երեխայի մեջտեղ ճեղք առաջացնեն ու երեխային տանեն ապաստարաններ, որտեղից հետո նրանց վաճառում են կամ օգտագործում: Թույլ չենք տա էս օրենքը անցնի: Հեսա սկսելու են ասուլիսներ, շրջաբերականներ իջեցնել, ինչ կեղտոտ գործեր, որ սատանան անում ա, պետք ա հանենք ջրի երես, ցույց տանք, որ ժողովուրդը հասկանա, որ սատանայի հետևից չի կարելի գնալ»...

«Գիրանալու հակում ունեցող երեխային հացաբուլկեղենից զրկելը տնտեսական բռնություն կհամարվի»

- «Ծնողի պարտականությունները կարող են նմանվել տնտեսական կամ հոգեբանական բռնությունների: Այդպիսի բռնություն կարող է համարվել գիրանալու հակում ունեցող երեխային երեկոյան հացաբուլկեղենից զրկելը, երեխաներին սովորեցնելը, որ իրենց ցանկություններն ու կրքերը զսպեն»...

- «Ենթադրենք՝ ծնողը երեխային ասում է՝ ականջներդ կկտրեմ, քեզ խելոք պահիր, ասենք, չարաճճի երեխա է, կարող է ամեն օր կրկնվել: Արդյոք այս գործողությունը չի՞ դիտարկվելու որպես ֆիզիկական բռնության սպառնալիք»...

- «Կարող է ծնողը երեխայի գումարը վերցնի, որ նա, օրինակ՝ չգնա գիշերային ակումբ, և դա նույնպես համարվի տնտեսական բռնություն»...

«Ձեր կյանքը դժոխքի կվերածվի»

«Ոստիկանը հնարավորություն է ստանում պաշտոնական նախազգուշացման որոշումից հետո ձեր կյանքը դժոխքի վերածելու: Օրվա ընթացքում որքան ուզենա նա կարող է այցելել ձեր տուն, իրավունք չունեք թույլ չտալ, դրա համար պատասխանատվություն է նախատեսվում: Կարող է այդ պահին աշխատանքային ընկերներով հավաքույթ ունենաս՝ մտնի ասի՝ հը՞, էսօր հո կնգադ չե՞ս ապտակել կամ տղայիդ ականջը հո չե՞ս ձգել: Աշխատանքային ընկերները կզարմանան, կգնան կասեն՝ գիտես, Արթուրի տանը այսպիսի բան է եղել, խայտառակ կլինես կոլեկտիվում»...

«Հաշվի չեն առնի, թե ի՛նչ պատճառով է ամուսինը կնոջը ծեծել»

«Եթե այս օրենքն ընդունվի, ծեծի փաստը արձանագրվեց՝ վե՛րջ, հաշվի չեն առնելու, թե՝ ինչ պատճառով է ամուսինը կնոջը ծեծել»:

Նշենք, որ նույն տրամաբանությամբ կարելի է նաև գողությունն ու սպանությունը, կոռուպցիան արդարացնել: Ցավոք, երբ հասարակությունում ծեծն արդարացվում է, պայմանավորված դրա պատճառով, դժվար է այդ հասարակությունն առողջ համարել:

Երեխայի աչքերով

«Ես սաղ տեսա, տեսա՝ պապաս մամայիս դանակով խփեց սպանեց»

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի տվյալներով՝ 2010-2017 թթ. ընթացքում ընտանեկան բռնության ընթացքում սպանվել է 50 կին: Սպանված կանայք հիմնականում 2 երեխա են ունեցել, կային նաև 3-4 երեխա ունեցող մայրեր: Թեժ գծերի միջոցով Հայաստանում ամեն տարի ընտանեկան բռնության հազարավոր դեպքեր են գրանցվում: Այս թվերի հետևում նույնպես երեխաներ են, ովքեր հաճախ ականատես կամ անմիջական զոհ են դառնում ընտանեկան ծեծուջարդի ու խոշտանգման...



Լուսինե Ղ.-ն ամուսնության 15 տարիների ընթացքում բռնության է ենթարկվել ամուսնու՝ Արսեն Խ.-ի կողմից, անգամ հղիության ժամանակ Խեչոյանը ծեծել է Լուսինեին: «Ես ու էրեխեքս ռեժիմով ծեծ էինք ուտում: Էրեխեքը ամիսներով դպրոց չեն գնացել, մինչև կապտուկները լավանան»,- պատմել էր Լուսինեն իր փաստաբանին: Ամուսինը հերթական վեճից հետո մեծ դստերը՝ 16-ամյա Մ.-ին, երկաթյա շղթայով կապել էր գոմում, իսկ Լուսինեին էլ սկոտչով կապել էր, որ հանկարծ չկարողանա էրեխու մոտ գնա՝ օգնելու: Դատարանում ամուսինն ասել է, թե այդպես փորձել է դաստիարակել դստերը: Իսկ դուստրը՝ Մ.-ն, փաստաբանին հոր մասին պատմել է՝ «Տրամադրում էր մամայի դեմ, ու մենք շատ է եղել, որ մամայի դեմ ցուցմունք ենք տվել ոստիկանությունում, եթե չանեինք, պապան մեր մատերը դնում էր վառարանի վրա ու վառում»: Մի անգամ էլ, երբ Լուսինեն հերթական ծեծից հետո հայտնվել էր հիվանդանոցում, Խեչոյանն իրենց աղջկան խփել էր սրճեփով, ինչ է թե աղջիկը ճաշի համար կանաչի չէր բերել:

Հասմիկ Խ.-ն էլ երկար տարիներ բռնության է ենթարկվել ամուսնու կողմից: Հասմիկը պատմել է. «Հայհոյանքները փառք էին, ինքն ամենավերջին ձևով ստորացնում էր: Իրա հաճույքներով գնում էր, գիշերվա կեսին գալիս էր, էրեխեքին հանում քնից, տղայիս ստիպում էր՝ մամայիդ էրեսին թքի, էրեսին բռունցքով խփի, քեզ լավ մամայի մոտ եմ տանելու: Էրեխեն եթե չաներ, ծեծ կուտեր, էրեխես զարթնում էր առավոտյան, ասում էր՝ մամա, ես չեմ ուզում պապան տենց բանի անի, որ ես էլ քեզ չնեղացնեմ»... Միայն երկար պայքարից հետո Հասմիկի երկու երեխաները հիմա իր հետ են ապրում, բայց մինչ մորը միանալը, այս երեխաներն անասելի հոգեբանական ապրումների միջով են անցել:

...Լուսինե Դ.-ին 3 տարի առաջ սպանել է ամուսինը, այս ընտանիքում էլ բռնությունը տարիներ շարունակ անպակաս է եղել: Լուսինեի ամուսինը՝ Արսեն Ա.-ն ձմռան ցրտին Լուսինեին, ծծկեր երեխայի հետ տանից դուրս է հանել, իբր՝ պատժում է: Լուսինեի սպանությանն ականատես է եղել նրանց 15-ամյա դուստրը. աղջնակը սենյակի ապակեպատ դռնից տեսել է, թե ինչպես է հայրը բռունցքով հարվածում մորը ու հետո՝ դանակով հարվածում: Եղբայրը՝ Ա.-ն, որը մոր սպանության ժամանակ 4-5 տարեկան էր, չի տեսել, թե ինչպես է հայրը դանակահարում մորը. քույրը՝ Ս.-ն, հասցրել է սպանության պահին ձեռքերով փակել եղբոր աչքերը: Նա չի տեսել նաև, թե ինչպես են մորն արյան մեջ շաղախված հյուրասենյակ տանում, բայց մեծերի խոսակցություններից հասկացել է՝ «մամային պապան ա խփել», և տատիկ-պապիկին ասել է՝ «մեծանամ՝ պապային սպանելու եմ»:

...28-ամյա Լիանա Մ.-ին սպանել է ամուսինը: 2014-ին Գյումրիում կատարված այս դեպքին ականատես է եղել նրանց՝ այն ժամանակ 5-ամյա որդին՝ Ա.-ն: Այս փոքրիկը տեսել է, թե ինչպես է հայրը դանակի 16 հարվածներ հասցնում մորը: Երեխան իր մորեղբորը պատմել էր. «Ես սաղ տեսա, տեսա՝ պապաս մամայիս դանակով խփեց սպանեց, հա խփում էր մամային, հա խփում էր»: Երեխան պարբերաբար տեսել է, թե ինչպես է հայրը ծեծում մորը: Տեսնելով մոր տանջանքները, Ա.-ն ամեն անգամ, երբ հարբած հայրը մոր վրա ձեռք էր բարձրացնում, հորն ասում էր. «Պապա, ե՞րբ ես գնալու Երևան, որ ես ու մաման հանգիստ ապրենք»:

...Նաիրա Ս.-ն պատմել է, թե ինչպես է պարբերաբար իր ամուսնու՝ Արա Խ.-ի կողմից հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ենթարկվել: Նրանք ունեն 4 երեխա, որոնցից ամենափոքրը՝ 3 տարեկան որդին, այժմ մոր հետ է ապրում: Նրանց 3 աղջիկները, որոնցից ամենամեծը 15 տարեկան է, գտնվում են հոր խնամակալության տակ: Դատարանում Նաիրան պատմել է, որ աղջիկները գտնվել են հոր և նրա ծնողների ազդեցության տակ, և հորը գոհացնելու համար պարբերաբար ծաղրի են ենթարկել իրեն, իսկ 2017 թ. հունվարի 4-ին, երբ հերթական վեճի ժամանակ ինքը ցանկացել է վերցնել իր դեռ 3 տարեկանը չլրացած որդուն և հեռանալ տանից, աղջիկ երեխաները իրենց մեջտեղում են կանգնել, իսկ ամուսինը սկսել է հարվածել իրեն. «Նա, օգտվելով իմ դիրքից, քացով հարվածեց դեմքիս, հետո երեխաներին ասում էր. «Ի՞նչ լավ կպավ, չէ՞, ի՞նչ լավ հարվածեցի, երեխանե՛ր, ծափահարե՛ք»: Իսկ մինչ դա էլ, որ լացում էի, ասում էր՝ «երեխաներ, չգանգե՞նք գժանոց, գան մամային տանեն: Ինձ անընդհատ ստորացնում էին երեխաների ներկայությամբ, ասում էին, որ դա մասնագիտություն չի, ասում էին՝ դու ոչ թե հոգեբան ես, այլ հոգեկան»:

...2014 թ. Արմավիր գյուղի գերեզմանատանը Արթուր Ս.-ն քարով բազմաթիվ հարվածներ էր հասցրել կնոջ՝ Արաքսյա Մ.-ի մարմնի տարբեր հատվածներին ու գլխին, հետո շեղբով կտրել պարանոցը, կինը հիվանդանոցում գիտակցության չգալով՝ մահացել էր: Արթուրը կնոջը սպանելուց հետո գերեզմանոցում փորձել էր ինքնասպան լինել՝ շեղբով ինքն իրեն կտրատելով, բայց բժիշկները փրկել են նրա կյանքը: Նրանք 4 անչափահաս երեխա ունեին, որոնցից այն ժամանակ 10-ամյա Ա.-ն և նրա քույրը՝ 13-ամյա Մ.-ն, մոր մահից հետո երկար ժամանակ չէին ուզում դպրոց գնալ, ամաչում ու մտատանջվում էին՝ ի՞նչ կասեն դասընկերները՝ հայրը սպանել է մորը: Հորական տատը պատմել է, որ թոռներին չէր ասում, որ իրենց մորը հարազատ հայրն է սպանել, իսկ հետո մոր հուղարկավորման օրը, մոր այլանդակված դեմքով դին տեսնելով, աղջիկն ասել է. «Մա՛մ, ով որ քեզ սենց բան ա արել, պատասխան ա տալու»: Այդ պահին մորական տատը երեխաներին ասել է. «Մարդասպանը պապադ ա, մորդ հերդ ա սպանել, նրան չներեք կյանքում»:

... Նարինե Դ.-ին դանակի 21 հարվածով ամուսինը սպանել է 2 դեռահաս դուստրերի ներկայությամբ: Նարինեի դուստրերը տեսել են, թե ինչպես է հայրը ծեծում իրենց մորը, ծաղկամանով հարվածում գլխին: Մոր մահվանից հետո, ինչպես տատն է պատմել, աղջիկները երկար ժամանակ հոգեկան ծանր ապրումների մեջ էին, նրանք դարձել էին ինքնամփոփ, դյուրագրգիռ...

> «Ես ամեն օր աշխատում եմ երեխաների հետ... Այն ընտանիքներում, որտեղ կա բռնություն, երեխան ևս բռնության է ենթարկվում, եթե ոչ ֆիզիկական կամ սեռական, ապա առնվազն հոգեբանական: Այդ երեխաների հետ մենք ենք աշխատում, մենք գիտենք, թե իրենք ի՛նչ հոգեկան ապրումներ են ունենում: Նրանցից շատերը, ցավոք սրտի, հետագայում իրենք են բռնարար դառնում»:
>
> *ՀՀ ոստիկանության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության պետ, գնդապետ Նելլի Դուրյան*

Փորձագետի կարծիք

Ինչ է նախատեսում երեխաների պաշտպանության մասով ընտանեկան բռնության մասին օրինագիծը

«Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության երեխաների պաշտպանության ծրագրի ղեկավար Աիդա Մուրադյանը, անդրադառնալով օրինագծին, երեխաների պաշտպանության տեսանկյունից կարևորեց այն հանգամանքը, որ նախագծում երեխան դիտարկվում է որպես իրավահարաբերության առանձին սուբյեկտ, ինչը նախնական տարբերակում բացակայում էր:

«Երեխան, ավելի շատ, ներկայացված էր որպես բռնության ենթարկվածի՝ հիմնականում մոր, խնամքի տակ գտնվող անձ: Տրված էր ընդհանուր ձևակերպում՝ ընտանիքի անդամներ, և երեխան՝ որպես առանձին կատեգորիա, նշված չէր: Բարեբախտաբար, շրջանառվող վերջին նախագծում, նաև մեր կողմից ներկայացված կարծիքի հիման վրա, կատարվեց փոփոխություն, և այժմ ավելի բաց ցանկով է նշվում, թե կոնկրետ ո՛ւմ նկատի ունի օրենքը, երբ ասում է ընտանիքի անդամ, և երեխան՝ որպես սուբյեկտ ներառվել է այդ ցանկի մեջ»,- ասաց Ա.Մուրադյանը:

Անդրադառնալով օրինագծի ընդդիմախոսների մտահոգությանը, թե օրենքը հնարավորություն կտա երեխաներին ընտանիքներից կտրել, մեր զրուցակիցն ընդգծեց՝ այն մարդիկ, ովքեր ասում են, որ այս օրենքով պատրաստվում են մեր «երեխաներին խլել մեզանից», թող օրենքի նախագծում համապատասխան հոդվածը ցույց տան: Նրա խոսքով՝ այս օրենքը երբևէ միտում չի ունեցել ընտանիքից երեխաներին առանձնացնելու, և այս հարցի շուրջ բարձրացված աղմուկն ուղղակի անհեթեթություն էր. «Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանք սահմանափակելը կատարվում է բացառապես դատական կարգով: Բացի այս, այսօր պետությունը իրականացնում է մեծ բարեփոխում՝ առաջնորդվելով «Երեխան պետք է ապրի ընտանիքում» կարգախոսով, փորձելով վերամիավորել մանկատներում և այլ հաստատություններում գտնվող երեխաներին իրենց կենսաբանական ընտանիքների հետ: Այսինքն՝ կստացվեր, որ պետությունը ինքն իրեն հակասում է նման գործիքակազմ ամրագրելով օրենքում, ինչը, բարեբախտաբար, այդպես չէ»:

> Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով, որին Հայաստանը միացել է 1992-ին, պետությունը պարտավորվում է. «պաշտպանել երեխաներին ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից»:

Փորձագետը հիշեցրեց, որ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 19-րդ հոդվածով պետության հիմնական պարտավորություններից մեկը բռնություններից ու չարաշահումներից երեխաների պաշտպանության ապահովումն է: Սակայն պետության կողմից դեռևս լիարժեք սահմանված չեն բռնության երևույթի գնահատման չափանիշները, բացակայում է բռնության դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունը, գործում չեն իրավասու մարմինների համակարգված և փոխհամաձայնեցված արձագանքման մեխանիզմները: Բացակայում են բռնության ենթարկված երեխաների վերականգնողական ծառայությունները և երևույթի կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ձևավորված չէ նաև հասարակության կողմից երևույթի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքը:

Այդ իսկ պատճառով, Աիդա Մուրադյանի խոսքով, օրենքի նախագծի մշակումն ու շրջանառության մեջ դնելը կարևոր քայլ են ոչ միայն ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքար մղելու, այլև երեխաներին այդ բռնությունից պաշտպանելու առումով:

Փակ դռների հետևում

Մի՞թե ծեծով պիտի դաստիարակվի երեխան

Համաձայն Հայաստանի Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության (2015-16 թթ.)՝ 1-14 տարեկան 10 երեխայից 7-ը հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում ենթարկվել են հոգեբանական կամ ֆիզիկական որևէ պատժի: Երեխաների 2/3-ից ավելին (65%) ենթարկվել է հոգեբանական ագրեսիայի, իսկ 38%-ը՝ ֆիզիկական պատժի որևէ տեսակի: Վաղ տարիքի երեխաների նկատմամբ բռնություն կիրառվել է ավելի հազվադեպ, քան 3-14 տարեկան երեխաների նկատմամբ: Այնուամենայնիվ, մեկ և երկու տարեկան երեխաների գրեթե կեսի նկատմամբ կիրառվել է դաստիարակության որևէ բռնի մեթոդ:

2015-ին «Վորլդ Վիժն Հայաստանի» կողմից անցկացված երեխաների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի նախնական գնահատման արդյունքում պարզվել է, որ ծնողների 74,7%-ը հետազոտությանը նախորդած վերջին մեկ ամսվա ընթացքում որպես պատժի ձև երեխաների նկատմամբ կիրառել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն: Ֆիզիկական բռնություն կիրառել է 39,7%-ը: Նույն ծնողների 67,4%-ը կարծում է, որ ֆիզիկական բռնության կիրառումը դաստիարակության արդյունավետ մեթոդ չէ, և միայն 8%-ն է կարծում, որ ֆիզիկական պատիժը արդյունավետ միջոց է: Հետազոտությունը անցկացվել է շուրջ 10000 ծնողների շրջանում, ընդ որում, դեռևս 2010 թ. կատարված մեկ այլ ուսումնասիրություն արձանագրել էր նույն ցուցանիշը:

Հայաստանում երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների թիվն ավելացել է

Այդ են վկայում «2015-2016 թթ. սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները» հետազոտության արդյունքները:

ՀՀ քննչական կոմիտեի իրավական ապահովման և վիճակագրական վարչության պետ Դավիթ Թումասյանի ներկայացմամբ՝ 2015 թ. սեռական բռնության են ենթարկվել 4-17 տարեկան 76 անչափահաս երեխաներ, իսկ 2016 թ. այդ թիվն ավելացել է 39-ով: «2016-ին սեռական բռնություն է իրականացվել 5-17 տարեկան 115 երեխայի նկատմամբ, որոնցից 53-ը՝ դպրոցականներ: Այդպիսով, 14-16 տարեկան անչափահասները սեռական ոտնձգությունների և բռնությունների տեսանկյունից պատկանում են ամենախոցելի խմբին»,– ասաց նա, նշելով, որ սեռական բնույթի գործողությունների երեխաներին մեծ մասամբ հարկադրում են նրանց հարազատները, դաստիարակները կամ ծանոթները: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ դեռահասներն իրենք են բռնություն գործադրում մյուս երեխաների նկատմամբ:

World Vision ՀԱՅԱՍՏԱՆ

տարբեր ու հավասար

Այս համարը պատրաստվել է Վորլդ Վիժն Հայաստանի «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագրի աջակցությամբ՝ «Տարբեր ու հավասար» քարոզարշավի շրջանակներում:

Համարի վրա աշխատել են՝
Լիա Խոջոյանը, Արման Ղարիբյանը, Մարիամ Հովհաննիսյանը, Լալա Տեր-Ղազարյանը

Գլխավոր խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
էլ. հասցե՝ womennetam@gmail.com